



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ ԺԲ. — ՇՐՋԱՆ ԻԱ. 1888 ՏԱՐԻ ԻԱ. ԴԵԿՏԵՄ. 30

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԻՍ ԲՆԱԿԻՉՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՆՑ ԿՐՕՆՆԵՐՆ:

ԵՐԿՐՈՐԿ ՄԱՍՆ

Մասի. Է. 10 20:

ՏՈՒՐ, ՏԷՐ, այն շնորհն, որ աշխարհիս փերայ Քս խօսքիդ փառքն ամեն տեղ ըմբռնած լինին մարդիկ: Որ աշխարհիս ամեն կողմը բնակուող ազգերը հաւաքուին ու մի հօտ գառնան. ամեն մի տղգ պատրաստ լինի քեզ պաշտելու թէև իւր ունեցած ու պինդ պաշած աւանդութիւններուն: Երբ որ դու մեզ

երկնից արքայութիւնն ես կանչում, այն ժամանակ ամենքս էլ
Քո առաջդ հաւասար ենք:

Տեսակ տեսակ կրօններն, որ աշխարհիս վերայ ապրող այլ և
այլ ազգերի մէջ գտնուում ենք, կարող են անշուշտ մեզ զար-
մացնել: Բայց, երբ որ ազգերի տեսակ տեսակ կրօններ ունե-
նալու պատճառներն ենք քննում, հեշտ ենք հասկանում
բանն: Այն ժամանակ մեզ համար հասկանալի է լինում, որ
մարդոց վերայ տարբեր ազդեցութիւն պիտի ունենար իրանց
ընտանեաց տեղը, նայելով թէ՛ ինչ աշխարհագրական դիրք
ունի, կամ թէ սարերով ծովերով թէ անտառներով է շրջա-
պատուած, կամ թէ անապատային տեղ է, նոյնպէս և իմանալով
թէ՛ սուսման և զարգացման ինչ աստիճանի վերայ են. այս ամեն
բանն, անկասկած, շատ մեծ ներգործութիւն պիտի ունենար
մարդու մտքի ու սրտի վերայ, ու նոյնչափ մեծ տարբերութիւն
պիտի յառաջ բերեր թէ՛ նոցա կենցաղավարութեան և թէ
մտածման կերպի մէջ:

Բայց և մարդոց ունեցած այս տեսակ տեսակ դաւանական
համոզմունքի մէջ տեսնում եմ: որ յի համայնայնութիւն կայ ամենա-
գլխաւոր բաների մէջ, առանց որոյ կրօնն էլ կրօն լինել չէր կարող:
Այս ամենազլխաւոր բանն, սր ամեն կրօնների մէջ տեսնում
եմ միշտ, հասարակն է, որ մի կառավարող Աստուած կայ,
մարդու ունեցած հաստատ համոզումն է, որ ինքն յարաբերու-
թիւն ունի աստուածային բանի հետ՝ և յոյս ունենալն, որ մահ-
ուանից յետոյ էլ կեանք ունի, պիտի ապրի: Այս երեք գլխաւոր
բանը գտնում ենք մենք ինչպէս քրիստոնէական կրօնի մէջ,
նոյնպէս և ամենավայրենի հեթանոսների մէջ:

Կրօնի՛ կամ հաւատոյ զգացումներ ունենալու ընդունակու-
թիւնը յատուկ է մարդու, ինչու որ իւր հետն է ծնած ու իւր
սրտի մէջ միշտ կայ այնպէս, ինչպէս որ մեր աչքին յատուկ է
տեսութիւնը՝ կամ տեսնելն, և ականջին՝ լսողութիւնը կամ
լսելն: Այս է պատճառն, որ կրօնի զգացմունք պէտք էր ծնէր
ամեն ազգերի մէջ, որչափ էլ իրարից անկախ լինէին, կամ մի-
մեանցից հեռու ընտանուէին: Եթէ որ այսօրուան օրս փոքր

երեխայք ուղիւնոսի հեռաւոր և անմարդաբնակ մի կղզի վտ-
խաւորուէին, որտեղ որ միայն պտուղներով կարողանային ապ-
րել՝ և այնտեղ մեծանային, ամենեւին տեղեկութիւն չունենա-
լով, որ ուրիշ մարդիկ էլ կան աշխարհումս, մեծանային առանց
ուսման և առանց ամենափոքր գաղափար անգամ ունինալու
մարդոց մտաւոր զարգացման ու յառաջագիմութեան վերայ,
այդպիսիների համար համաշխարհական պատմութիւնն, այսպէս
ասեմ դեռ ևս բոլորովին նոր սկսվում կլինէր: Այսպէս մե-
ծացողները պէտք է հնարէին մի լեզու, պէտք է սովորէին
վտանգներից իրանց պաշտպանելու, վայրենի կենդանիներին
սպանելու, կրակ անելու, մետաղներ դարբնելու—մի խօսքով՝
այն ամեն բանն անելու, ինչ որ սովորել ու արել են շատ հին
ժամանակի մարդիկ: Ու այս նախիկն մարդոց նման՝ ուղիւնոսի
հեռաւոր և անմարդաբնակ կղզում՝ մեծացածներն էլ՝ իրանք
իրանց կհասնէին նոյնպէս կրօնական գաղափարների: Ինչու որ
աստուածայինը ճանաչելու համար՝ մարդուս ունեցած հակա-
միտութիւնն՝ իւր սրտի մէջ երբէք երկար ժամանակ հանգիստ
չէ մնում: Իւր բնութեանը համեմատ՝ մարդուս միտքը պիտի
միշտ զօրանայ ու իւր նշանակութիւնը ստանայ. այս ճանաչո-
ղութեան զգացմունքը զարթնում է նորա մէջ՝ երբեմն բնու-
թեան արհաւիրքներից, երբեմն բարերարութիւններից, երբեմն
էլ յառաջ է գալիս կեանքի ուրախ կամ տխուր փորձառու-
թիւններից:

Նաո հին ժամանակի ամենաշատ՝ գուցէ հէնց բոլոր կրօնների
տեսակները՝ բազմաստուածութեան վերայ էին հիմնուած:
Բնութեան այդ միամիտ որդիքն իրաց նախազգացումովը՝ կամ
սրտի վկայութիւնով՝ երկնքից ցած եկած կայծակից, երկրա-
շարժից, ծովի ալեկոծութիւնից դողում էին. շատ բանի մէջ
դեռ ևս անտեղեակ՝ այդ անփորձ ու չզարգացած մարդիկն
այնպիսի վտանգների էին հանդիպում, որոնց առաջն առնելու
իրանց պէս մահկանացուք անզօր էին: Բայց և յետոյ սաստիկ
ուրախանում էին, երբոր արեւի պայծառ ճառագայթներն էին
տեսնում, կամ գարնանը՝ ծառերի կանաչելը, կամ երբոր տես-
նում էին, որ ցորեկը հասել է. այս իրանց տեսածներն էլ ան-
կասկածելի կերպով իրանց ցոյց էին տալիս, որ իրանց մարդկա-
յին ուժից վեր երևոյթներ են ու մարդկային կարողութիւնից

բարձր մի զօրութիւնից են: Այս ամեն բանն, որ լինում էր ու տեսնում էին իրանց կեանքի մէջ հին ժամանակի մարդիկն, իրանց տեսած այս բաների մէջ հաւատում էին, որ ջսկ ջսկ աստուածութիւններ են տեսնում: բարի՛ կամ չար ոգիներ, սրտնք որ հրկնքումն են բնակւում՝ կամ գեանի տակը: Նրանք գեռ ևս այնչափ զարգայած ու յառաջացած չէին մտքով ու հասկացողութեամբ, որ տեսակ տեսակ պատահմունքները քննելով, կարողանային հասկանալ թէ՛ մի պատճառից են յառաջ գալի: Մի Աստուծոյ՝ կամ մի աստուածութեան հաւատալն ու գազափարը շատ կամայ կամաց միայն՝ և հազարաւոր դարերի մէջ ունեցած զարգացման ընթացքում կարողացաւ մարդս իւր մէջ հասունացնել: Մի Աստուած ճանաչելու ամենառաջին և ամենահին հետքը գտնում ենք հրէից ազգի մէջ, որոյ համար արժէք ու կշիռ ունէր մի Աստուած ճանաչելու գաղափարն իբրևեհՅօւլայից (յաւհոտենական Աստուծուց) տուած օրէնք թէ՛: Իսկ բացի ինձանից ուրիշ աստուած պիտի չճանաչես: Բայց և այնպէս մի աստուածութիւն ճանաչելու հաւատն ու գազափարը գեռ երկար ժամանակ սահմանափակուած մնաց, որովհետև բացառապէս վերաբերում էր միայն իսրայէլացւոց ազգին ու տէրութեան: Եւ թէպէտ Աստուած էր ճանաչւում միակ թագաւոր ու նա միայն պաշտւում, բայց այս ճանաչման հետ միասին կար և այն տիրող ենթադրութիւնը թէ՛ ուրիշ աստուածութիւններ էլ կան, որ իշխում են հեթանոս ազգերի վերայ: Քրիստոսի աւետարանով աւանդած ուսմամբը միայն տարածուեցաւ ճանաչումն ու գաղափարը՝ թէ ամենայն մարդիկ մի հասարակաց Հայր ունին:

Նոյն արմատից, որից յառաջ եկաւ Աստուծոյ հաւատալը՝ բուսած մի ճիւղ է մարդոց հաւատալն, թէ մեր հոգին մեր մահուանից յետոյ շարունակում է իւր կեանքն ու ապրում: Մարդուս հոգւոյ մէջ կայ մի զօրեղ, բնածին գիտակցութիւն կամ ճանաչողութիւն իւր բարձր արժանաւորութեան և իւր կենսական զօրութեանմասին, որ մահուանից դէնն էլ ապրում է՝ երկրաւոր ամեն բաների անցնելուց յետոյ: Սորանիցն է, որ ոչ հին և ոչ նոր ժամանակի մէջ ոչ մի ազգ չէ գտնուել, որ մահուանից յետոյ կեանք ունենալու մասին սրտի վկայութիւն չունենար: Բայց այս գաղափարներն այլապէս կերպացան, նայելով որ և իցէ ող-

գի զարգացման աստիճանին ու բնաւորութեանն, և ուրիշ ուրիշ կերպարանք ստացան: Հին Եգիպտացիներն ու Ասիայի Բուդդայականները սորվեցնում էին թէ հոգեփոխութիւն կայ: Հարուստ երեւակայութիւն ունեցող յոյներն առասպելաբանում էին՝ իրանց հեթանոսական գալափարովք թէ՛ գետնի տակ աշխարհ կայ՝ ու մէջը՝ տարտարոս կամ դժոխք, գառապարտուածների համար, և Եդիոեան դաշտեր կամ արքայութիւն՝ երճանիկների համար: Ամերիկայի Հնդկաստանցիք մտածում էին երեւակայական բաներ իրանց որոյ յաւիտենական դաշտերի վերայ, և այլն: Քրիստոնէութիւնն այս կրօնական հիմնական գալափարն էլ իւր անպզտոր յտակութեամբն ու մաքրութեամբը յայտնեց մարդոց ու իրանց սրտի գերագոյն ամենասուրբ յոյսը ճանաչեցրեց:

Աստուած հաւատալու և անմահութեան յոյս ունենալու այս երկու գաղափարների հետ ընկերանում է մի երրորդ գաղափար և ս մարդկային բանականութեան մէջ. այս երրորդ գաղափարը խղճմտանքն է, որ մեզ սորվեցնում է բարին չարից զանազանել, ու բարին սիրել, իսկ չար բանն ատել: Սորանիցն է յառաջ գալիս ամենայն բարեպաշտութիւն՝ թէ՛ երկիւզն ու վստահութիւնն և թէ՛ աղօթքն ու զոհն՝ ինչպէս մի մարդունոյնպէս և բոլորի: Պատճառն որ հարցնես, այն է, որ մեր մարդկային ազգի ընկերական բնութեան մէջ կայ միանալ՝ ինչպէս որ քաղաքական գործոց ու հանգամանաց մէջ, նոյնպէս էլ կրօնական յարաբերութեանց մէջ: Ուր սր կայ կրօն, այդ կրօնը, միշտ զարգանալով, պիտի կատարելագործուի, արարողութիւններ ունենայ ու պիտի դառնայ հասարակական սուրբ պարտաւորութիւն ու Աստուծոյ պաշտօն: Դեռ և ս աշխարհիս մէջ պատահած չէ, որ մի ազգի կրօն առանց հրապարակական աստուածապաշտութեան եղած լինի:

Կրօնների պատմութիւնն, սկսած իրանց հնագոյն մութ ծագումից՝ մարդկային ազգի սկզբնագոյն և շատ հին ժամանակներում՝ մինչև գալով հասնելը ներկայ ժամանակիս զարգացման ու լուսաւորութեան շատ աւելի բարձր աստիճանին, մտածող քրիստոնէի համար մի սուրբ հետաքրքրութեան առարկայ է: Այդ պատմութիւնը մեր աչքի առաջն է դնում ու ցոյց տալի մեզ այն պատերազմն որ պատերազմում էր շատ հազարուոր

տ սրիների ընթացքում մարդու մէջ եղած ատուածայինն՝ նորս անասնական կողման կամ հակամանը հետ: Այդ պատմութիւնը մոլեռանգութեան քսամների կատաղութեան և ամենաարիւնահեղ կռիւների մեծամեծ օրինակներով լի է ու յետոյ էլ մեր առաջն է գնում աշխարհիս վերայ եղած իմաստութեան և առաքինութեան լուսապայծառ ծաղիկները:

Մարդիկ իբրև զգայական արարածներ, շատ վաղուց միշտ քանք են արած և ուզեցել են մարմնացնել այն, ինչ որ երկրաւոր չէ, ինչ որ զգացմանց տակ չէ ընկնում, որ աւելի պարզ կերպով ըմբռնեն ու հասկանան: Այդ մտքով էլ շինել են իրանց ատուածների տեսանելի պատկերն, որ երբեմն ցուլն է եղել՝ իբրև նշանակ ու յայտարար ուժեղութեան, որ ցոյց է տալիս իւր եղջիւրների ուժովն, երբեմն օձն՝ իբրև նշանակ՝ յայտարար խելօքութեան ու պաղաքերութեան: Այսպէս պարզ յայտարար նշանակը խառնելով, շփոթելով այն բանի հետ, որ պիտի ցոյց տար իբրև նշանակ յայտարար, յառաջ եկաւ կռապաշտութիւնն: Երեսուցան հաստատ ու մնայուն սեղանների, մնայուն կռատուններ կամ տաճարներ չաստուածների համարկարգութեան կուռքերի սպասաւորների, և ամեն բան, ինչ որ մարդուս հոգւոյ մէջ մտածմունք էր ու զգացմունք, տեսանելի կեանքի մէջ երևեցաւ մարմնացած:

Ժամանակ ժամանակ դուրս եկան բարձր հասկացողութեան տէր մարդիկ, որոնց Աստուած ինքն էր ընտրել, որ հոգեւոր աշխարհի մէջ լոյս տարածեն ու սորվեցնեն աւելի արժանաւոր կերպով ճանաչել իրանց Ստեղծողին: Աստուածանից զրկուած այգւլիսի մի մարդ էր Մալուա Տարգարէն: Բայց Պարսիկներն էլ, Հնդկաստանցիք էլ, Չինացիք էլ և գրեթէ բոլոր հին ազգերը պարծենում են, եթէ ոչ իրանց ունեցած աստուածային յայտնութիւններովն, որ իրանց հաւատոյ հիմն են եղել. պարծենում են գոնէ իրանց շատ լուսաւորուած իմաստուններովն, որ իրանց հայրերին տուել են համեմատաբար մի լաւագոյն ճանաչողութիւն Աստուծոյ վերայ ու մարդկային պարտաւորութեանց վերայ: Հին ժամանակում գտնուել են այնպիսի ազգեր, որ այս իմաստուններին աստուածային էակներ են համարել, և աստուածային պաշտօն են մատուցել:

Այս ամեն բանը պէտք էր կրօնների բազմատեսակ լինելուն

աւելի և աւելի օգնէր: Արչափ էլ կրօնի սկզբնական սերմն ա-
մենայն տեղ միւսնոյն է եղած, բայց նայելով տարբեր հողերի վի-
րայ ծլելուն, այդ սերմն բացուել ու աճել է շատ զանազան
տեսակ կերպով: Այսպէս նոյն սերմն, թէև ամեն տեղ նման
բոյսերի տեսակներ է յառաջ բերում, բայց հազարաւոր նոյնա-
տեսակ բոյսերի մէջ ոչ մէկը իւր ամէն մասերովը միւս նոյնատե-
սակ բոյսին բոլորովին նման չէ:

Ամեն մի ազգ, իւր մտնկութիւնից, իւր հարց կրօնին նուի-
րուած լինելով, իւր կրօնը միշտ առնալաւն ու առնանջալի է
համարել: Սովորութիւններն ու մօր կաթի հետ ծծած և իւր
մէջը մտած գաղափարները ներգործել են ինչպէս որ մի անհատ
մարդու, նոյնպէս էլ մի ամբողջ ազգի վերայ: Եւ այսպէս կրօն-
ներն անշուշտ ոչ պակաս փոխադարձ ներգործութիւն են ու-
նեցել սովորութիւնների, աւանդութիւնների, օրէնքների, աէ-
լութեան կարգադրութիւնների ու կառավարութեան կերպի
վերայ, քան թէ ներգործութիւն է ունեցել աշխարհագրական
ինչ գօտայ մէջ գտնուին երկրի, որոյ վերայ բնակուած են ե-
ղել այլ և այլ ազգեր՝ իրանց ունեցած կրօնի գաղափարը կազ-
մակերպուելուն վերայ:

Շատ բնական էր, որ ամեն մի մարդու իւր հաւատի սուրբ
արժանաւորութեան վերայ ունեցած հաստատ համոզմունքից
ու մեծարանքից զէպի իւր կրօնի հիմնադիրը՝ պիտի յառաջա-
նար, որ հաւատակիցք ատէին ուրիշներին, որոնք որ ի-
րանց հաւատից չէին: Այսպէս կամաց կամաց յառաջ եկան՝ կր-
օնից ծագած ատելութեան հետ՝ հաւատոյ համար եղած կա-
տաղի պատերազմներն, որ մարդկային ազգի պատմութեան մէջ
արիւնհաներկ արատներ են թողած իրանց հոտից: Այն մարդն
միայն, որ տհաս երեխայի նման հօգուոյ զարգացումից զուրկ է
ու մաքով կայր, ոչ մի հաստատ կարծիքի, ոչ մի ճշմարտութեան,
ոչ մի սուրբ բանի գաղափարին ղեռ և ս հասած չէ, նա կարող
է անտարբեր մնալ, կամ բանի տեղ չգնել այն, ինչ որ մի ուրի-
շը ճշմարիտ ու սուրբ է համարում և բնութենում: Մտրի մի
բարձր դարգացումն արդէն պիտի ունենայ մարդս, որ էակա-
նը երկրորդական բանից, կարևորը՝ յետոյ աւելացածից զանա-
զանել կարողանայ ու հասկանալ, որ մի մարդու ունեցած կար-
ծիքին, գաղափարին, զգացմունքին, համոզմունքին ու սուրբ

համարած բանին չպիտի կայի, կամ խառնուի, որովհետև ամեն մարդոց դործը չէ, ուրեմն և ըստ ամենայնի ղիջողարար և համբերող երկայնամտութեամբ պիտի վարուի հետն:

Երբոր խելքի տակ ենք քցում այլ և այլ ազգերի կրօնները, տեսնում ենք, որ իսկապէս մի կրօն միայն ունին և ոչ աւելի, բայց այդ մի կրօնի տեսալիները շատ են աշխարհումն: Այլ կրօն միայն կարող է լինել, ինչու որ մի Աստուած միայն կայ, Որից որ ասէնք կախումն ունին և Որոյ հետ ասէնք յարակցութեան մէջ են, և Որին դառնում են ասէն սրտերն: Եւ այս մտքով ամենայն մարդիկ մի հաւատ միայն ունին, այսինքն է՝ մի Աստուած են ճանաչում, մի մի պարսաւորութիւն միայն ունին, որ յառաջ է գալիս այն առնչութիւնից, որոյ մէջ գտնուում է մարդս Աստուծոյ հետ, որ է ակն. մի յոյս միայն, որ մարդուս ունեցած յոյսն է լաւագոյն կեանքի արժանանալու իւր մահուանից յետոյ:

Ապա ուրեմն աշխարհիս վերայ գտնուած ամեն տեսակ կրօններից ասէնպէս որն է:

Այս հարցը, արդէն ջատ անգամ է առաջ բերուած, այլ և այլ դաւանութեան հետեւող ազգերի մէջ և առիթ է տուել շատ վէճերի, ինչու որ ամեն մի տարբեր դաւանութեան հետեւողներն ապացուցանում էին, որ իրանց կրօնական համոզմունքն ամենահշմարիտն է և ամենաերջանկացուցիչն, և թէ իրանք հակառակ կրօնական կուսակցութեան մէջ մոլորութիւն են: տեսնում ու գտնում և այս պատճառով կարծեաց՝ կամ համոզմանց միտնալու վերայ մտածել երբէք չէր կարելի: Բայց և այսպիսի վիճաբանութիւնով շատ անգամ ապացուցուեց էլ, որ կրօնի ամեն մի տեսակն ամեն մի մարդու համար միակերպ յարմարաւոր չէ, թէ այլ և այլ ազգերի համար կրօնի այլ և այլ տեսակներ պիտի լինին, և թէ ամեն մի մարդու համար այն կրօնն է ամենալաւն, որ իւր ճշմարտասիրութեամբն ուրիշ դաւանութիւններից ամենից աւելի համապատասխանն է, և որն մարդուս իւր սրտի մէջ երջանկացնում է: Սորա համար է, որ երեխայի ունեցած հաւատը միեւրոյնը չէ կարող լինել կատարելահասակ մարդու ունեցած հաւատի հետ, կամ մի բիրտ, աղքատամիտ ու վայրենի մարդու հաւատը՝ մի լուսաւոր կերպով մտածող, բազմախորձ մարդու հաւատի հետ միեւրոյնը լինել:

Առանց երկմտելու՝ համարձակ ասենք թէ՛ ամենազնիւ կրօնն այն է՛, որ շատ ու շատ օգնում է մարդու սիրտն ու հոգին ազնուացնելու և երջանկացնելու, և հաւատոյ ունեցած ազգերու թիւնը մեր կեանքի վերայ, որ Աստուծոյ ճանապարհովն ապրենք: Կրօնների արժէքը ճանաչելու համար Յիսուս Քրիստոս մեզ տուեց ուղիղ և անսխալ կանոն՝ իրանց պատուհներին կճանաչէք իրանց: Մի՞թէ կարելի է փշից խաղող քաղել, կամ մորենուց՝ թուզ: Այսպէս ամեն լաւ ծառ լաւ պտուղ է բերում, ու վատ ծառը՝ վատ պտուղ բերում: Ամեն մի ծառ, որ լաւ պտուղ չէ բերում, կկտրուի ու կրակը կը քցուի: Ուրեմն նորանց պտուղներից պիտի ճանաչէք նորանց: :

Մովի՞ի կրօնն, որից անբաժան էին տեսակ տեսակ զոհերը, ծէսերը, լուացումներն ու թլփստութիւնն, յարմարաւոր էր միայն արեւելեան երկրների համար, գերութիւնից դէպի ազատութիւն տարվող մի ազգի համար միայն: Այդ կրօնը մի ջոկ ազգային կրօն էր՝ ու Եհովան (Յաւիտեանականն) էլ մի ազգային Աստուած: Սորա համար էր, որ հրէից ազգն անուանվում էր Աստուծոյ միակ ընտրեալ ժողովուրդ: Այս ազգը հեռու էր պահում իրան ուրիշ ամեն ազգերից իբրև թշնամիներից, նորանց հետ ամենեւին չէր խառնվում, իւր համար ջոկ էր ապրում և ուրիշ ազգերին ատում էր իբրև պիղծ, իբրև Աստուծոյ երեսից ու աչքից ընկած մարդոց: Ուրիշ ազգերի գիտութեան մէջ արած յառաջագիմութիւնից էլ՝ ոչ մի բան չէր վեր առնում, չէր իւրացնում. տաճարի մէջ կատարուած աստուածային պաշտօնն ու արտաքին ծէսերը նորանց համար ամենազլխաւոր բանն էր: Այս բարեպաշտական արտաքին գործերի վերայ հիմնած սրբութիւնովը կորաւ վերջապէս հրէից մինչև անգամ այն ազգային ուղղութիւնն, որով առաջ հաւատարիմ էին ազնիւ բարոյական օրինաց, որ Մովսէս մարգարէն տասն պատուիրաններով իրանց տուած էր: Սորանիցն էր, որ հրէայք մարդկային մտաւոր յառաջագիմութեան ու զարգացման կողմանէ ուրիշ ազգերից յետ մնացին, ու արհամարհվում էին ուրիշ ազգերից իբրև աւելորդապաշտ, նախապաշարմունքի մէջ խեղդուած ու եսասէր մի ազգ: Եւ պէտք է ասենք ճշմարիտը. մի կրօն, որ այդ պիսի ներգործութիւն է ունենում

մի ժողովրդի վրայ, միթէ ամեն կրօններէյ ամենալաւը պիտի լինէր:

Արաբիոյ անապատներում Մահմեդի սահմանած կրօնն, որոյ հետևողներն են և Եւրոպայում բնակուող տաճիկներն, ունի այն ակներև նշաններն, որ այդ կրօնը մասնաւորապէս սահմանուած էր այնպիսի մի ազգի համար, որ պատերազմասէր ու աշխարհակալ պիտի դառնար: Եւր սահմանած կրօնին հետևողներ որսալու համար՝ հիմնադիրն այդ կրօնի մէջ միախառնեց շատ բան՝ հիթանոսական, հրէական ու քրիստոնէական կրօններից: Մինչև անգամ այն յայտնութիւններն, որ ունեցաւ Մահմետը մարդուս կեանքի իւր մահուանից յետոյ ունենալու վիճակի մասին, պատերազմող զինուորներին սիրտ տալու նպատակը միայն ունէին, և գերեզմանից դէնն՝ այն կեանքումը նորանց ստանալու վարձատրութիւնները՝ կամ հատուցումն, մտածուած էին իւր կողմից իբրև մի զգայական, հեշտասիրական կոպիտ մարմնական ցանկութեան յագուրդ ստանալ միայն: Սորանիցն էր, որ մահմեդական կրօնի հետևողներն եղան քաջասիրտ, օտար ազգերին ատող, աշխարհակալութեան համար հոգի տուող: Սորանիցն էր, որ նրանք, ձեռքները զէնք առած, տարածուեցան այլ և այլ երկիրներ, բայց երբէք չկարողացան բարձրանալ իրանց բնածին բարբարոսութիւնից և ազնուանալու մի որոշ աստիճանի հասնել: Այսպիսի մի կրօն կարող էր արդեօք բոլոր մարդկային ազգի կրօնը լինել:

Եթէ որ մենք ծառն իւր բերած պտուղներից պիտի ճանաչենք, պիտի խոստովանուենք, որ Յիսուսի Քրիստոսի կրօնը գերազանցն է ամեն կրօններից: Փրկչի մեզ սովորեցրած կրօնը շատ առաջուանից, հէնց սկզբից ամենազօրաւոր կերպով ներգործել է ազգերի բարոյականութեան, մարդոց բարք և վարքի ամբողջութուն ու նորանց սիրտն ու հոգին ազնուացնելու վերայ: Միւս տեսակ կրօնները՝ քիչ կամ շատ՝ երկրաւոր, անցաւոր նպատակների համար են: Հազիւ գտնում է մարդ, որ Մովսէս մարգարէն իւր գրքերի մէջ յաւիտենական կենաց յոյսերին մի մեծ կշիռ ու արժէք տուած լինի, իսկ Մահմեդը՝ մարդուս մահուան ժամից դէնը՝ միւս կեանքումն երևակայում էր հաւատացեալների ընդհանուր զգայական վայելչութիւնները միայն: Իսկ եթէ անհերքելի կերպով ստոյգ է, որ հոգին մարմնից աւելի ազ-

Նուազոյն է, նոյնպէս անհերքելի է, որ Յիսուսի Քրիստոսի մեզ աւանդած կրօնն աւելի վսեմ՝ աւելի իմաստուն կրօն է, քան թէ մարդկային ազգի բոլոր կրօններն եղել են ու են: Ինչու որ Նորա խօսքը հոգու համար միայն ասած խօսք է, ոչ թէ զգայականութեան համար. Նորա մեզ սովորեցրած աստուածաշատութիւնը հոգիների Տիրոջը հոգւով և ճշմարտութեամբ երկրպագութիւն անելումն է: Ուրիշ կրօններն օտարների համար կործանիչ ուղղութիւն ունին. այդ կրօնները՝ թէ՛ զգայականութեան և թէ՛ նորանից յառաջացած շատ կրքերին սնունդ են տալի: Այդ կրօնների հետևողներն իրանց թշնամի են համարում՝ այն ազգերին ու նրանց անդամներին, որոնք որ իրանց հաւատից չեն. բայց Յիսուսի Քրիստոսի կրօնն ամեն երկիրների մարդոց միմեանց հետ եղբայր է դարձնում. քրիստոնէական հաւատ ունեցողն ամեն մի մարդու իւր մերձաւորն, իւր ընկերն է համարում, Յիսուսի Քրիստոսի կրօնը մեղսային կրից թշնամի է միայն քրիստոնէական հաւատն՝ ոչ միայն այս՝ այն տղգի և աշխարհիս մէջ գտնուած այս՝ այն երկրի համար է, այլ աշխարհիս ամեն մասերի և ամեն բանաւոր արարածների կրօնը կարող է լինել: Քրիստոնէական կրօնն իւր տուած սիրոյ պատուիրանովն երջանկացնում է մարդոց, որով և յաջողութեամբ առաջացնում է ամենաընդհանուր սէր, բարեկամութիւն և երջանկութիւն. այն, մարդուս հոգին անցաւոր բաներից աւելի բարձրացնելով, անբաղդութեան մէջ մխիթարութիւն է պարգևում նորան՝ և վեհանձնութիւն ու քաջութիւն ամենայն՝ մինչև անգամ ամենածանր պատահարների մէջ. քրիստոնէութիւնը մարդուս հոգին ոչ միայն աւելի պինդ կապում է Աստուծոյ հետ, այլ հէնց աւելի աստուածային էլ է անում:

Սորա համար քրիստոնէական հաւատը բոլոր մարդկային ազգի համար յատկապէս յարմարագոյնն է: Թէ՛ շատ իմաստուն՝ և ուսեալ մարդու, և թէ՛ երեխայի կրօնը կարող է լինել. աշխարհիս թէ՛ ամենասառն և թէ՛ ամենատաք երկիրների բնակչաց կրօնն. ամեն ցեղերի և ամեն ժամանակների կրօնը: Յիսուս Քրիստոս բացատրեց ասն կրօնելի «իշխական թիւն կամ սէր» իւր փառաւոր կատարելութեան մէջ և ամբողջ աշխարհիս հետ ունեցած համաձայնութեան մէջ: Նա յայտնեց ու ճանաչեցրեց

Աստուծո՞ւն իւր ծայրագոյն մեծ վայելչութեան մէջ՝ իբրև մարդկային ազգի հայր մարդոց՝ Աստուծոյ զաւակներ ու իրար մէջ՝ միմեանց եղբայրներ. յաւիտենական կեանքն՝ բարի և չար գործոց հատուցումն անող. իսկ իբրև՝ Աստուածանից զբրկուած՝ մարդկային ազգի եղբայր. որ մոլորուած, մեղքի մէջ ընկած, ստորացած ու թշուառացած մարդուն բարձրացնի. էլ ի տանի իւր արժանաւորութեանն, ու մարդոց սիրտն առ Աստուած դարձնի: Այս էր հասարակ «էրը, յայն», որ Նա մահկանացու մարդկային ազգին տուեց. այս է միակն, անփոփոխն, յաւիտենականն ու ճշմարիտն, որ իբրև ամենախորին նախագացումն՝ հիմն է ամեն՝ մինչև անգամ այլանդակ կրօնների: Սորա համար էլ աշխարհիս Փրկչի յայտնած հաւատն «կրօնագոյն», իսկական և բռնկրօն է, մարդկային ազգի հոգւոյ մէջ Աստուածանից դրած սրբութիւնն:

Թարգմ: Գ. Ե Ա.

Ռուսաց ЦЕРКОВИ. ВѢСТ. շաբաթաթերթի իւր 42 համարում հրատարակած է յօդուած «ինչպէս անցնում են տօն և կիրակի օրերն ընդհանրապէս Ռուսաստանում և մասնաւորապէս Մոսկվայում»: Այս յօդուածի մէջ դուրս է բերած, որ շահախնդրութիւնն և դրամական վաստակի սէրը բոլորովին հեռացրել է Ռուս ուղղափառ ժողովուրդը եկեղեցու պահանջից, որ հրամայում է սուրբ պահել կիրակի և տօն օրերը, սրանց Աստուծոյ պաշտաման նուիրելով, մինչդեռ ներկայումս ամենուրեք հակառակն է տեսնուում: Այս խնդրի մասին Մոսկվայի քաղաքային վարչութիւնը ներկայ տարուան մայիսին վճիռ կայացրեց, որ կիրակի և տօն օրերին առւտրական հաստատութիւնք և գործարանները դադարեցնեն իրանց գործունէութիւնն և միջոց տան այսպէս իրանց մէջ աշխատողներին, տօն օրերը նուիրել Աստուծոյ և իրանց բարոյական—կրօնական բաւականութեան: Բայց փոքրաթիւ շահասէրների դիմադրու-